ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երևան, 9 նոյեմբերի 2019թ.

ՀՅԴ ԲՅՈՒՐՈՅԻ ՆԱԽԱՁԵՌՆԱԾ ՀԱՎԱՔԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Հայ դատի հանձնախմբերի և գրասենյակների հարգարժա՛ն ներկայացուցիչներ,
Տիկնա՛յք և պարոնա՛յք,

Ողջունում եմ բոլորիդ և ուրախ եմ, որ մեկ հարկի տակ են հավաքվել հայ ժողովրդի ճակատագրի հանդեպ սրտացավ, հայկական հարցի արդար լուծմամբ շահագրգիռ, Հայ դատը առաքելություն հռչակած մարդիկ՝ ազգային, պետական, հասարակական ու քաղաքական գործիչներ, գործարարներ ու բարերարներ տարբեր երկրներից և քաղաքներից:

Հարգելի՛ բարեկամներ,

Հայ դատի առաջնահերթ առաքելությունը եղել ու մնում է Հայոց ցեղասպանության ճանաչումը: Դա ոչ միայն առաքելություն է, այլև՝ պարտք և պարտավորություն: Անշուշտ, այն ազգանպաստ գործունեությունը, որ ծավալում են Հայ Յեղափոխական Դաշնակցության, Հայ դատի հանձնախմբերն ու գրասենյակներն աշխարհի տարբեր երկրներում, տեսանելի չէ ամենայն մանրամասնությամբ: Սակայն նկատի ունենանք, որ այդ գործընթացն ինչ-որ առումով նման է դիվանագիտությանը, որտեղ ամեն ինչ չէ, որ բացահայտ է:

Ի պատիվ Հայ դատի հանձնախմբերի՝ պետք է ասել, որ, գտնվելով տարբեր երկրներում, նրանք կարողանում են գործել համակարգված և արդյունավետ: Նրանց ջանքերի շնորհիվ է նաև, որ տարբեր պետություններ, խորհրդարաններ, միջազգային կառույցներ ընդունել են Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող իրավական ակտեր: Ամենաթարմ վկայությունը ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի

վերջերս ընդունած թիվ 296 բանաձևն է, որն արձանագրում է՝ Միացյալ Նահանգների կառավարությունը պետք է պաշտոնապես ճանաչի և ոգեկոչի Հայոց ցեղասպանությունը, չմասնակցի այդ փաստի ժխտմանը և խրախուսի Հայոց ցեղասպանության հանրային ըմբռնումը:

Այդ ամենը Հայաստանի Հանրապետության պետական ու դիվանագիտական կառույցների, ինչպես նաև տվյալ երկրների պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների, նաև սփյուռքի մեր հայրենակիցների, ավանդական կուսակցությունների, ազգային և եկեղեցական կառույցների, նրանց աջակիցների, բարեկամների, ընկերների լայն շրջանակի քրտնաջան աշխատանքի, հսկայական ջանքերի արդյունք է:

Օգտվելով առիթից՝ խորին շնորհակալություն եմ հայտնում Հայ դատի գրասենյակներին ու հանձնախմբերին, Հայ դատի նվիրյալներին, անհատներին, աջակիցներին՝ հայանպաստ գործունեության, հայրենասիրության ու համազգային բարձր գիտակցության համար:

Հարգելի՛ ներկաներ,

Ժամանակակից աշխարհը առաջ է ընթանում մեծ արագությամբ: Ուստի անհրաժեշտություն կա հռչակած նպատակները, ռազմավարությունն ու մարտավարությունը համապատասխանեցնել այսօրվան: Հայ դատի գրասենյակների և հանձնախմբերի աշխատանքները Հայոց ցեղասպանության ճանաչման հարցից բացի ընդգրկում են նաև այլ ոլորտներ: Հայաստանի միջազգային վարկի ամրապնդմանը, նրա տնտեսական հզորացմանն ու առաջընթացին, Արցախի հարցի արդարացի լուծմանն ու Արցախի ինքնորոշման իրավունքի միջազգային ճանաչմանն աջակցելը համազգային այն առաջնահերթություններից են, որոնք համահունչ են Հայ դատի գրասենյակների և հանձնախմբերի գործունեությանը: Այս առումով դրվատելի է նրանց օգտակար մասնակցությունն այս գործընթացներին:

Անշուշտ, Հայ դատի հանձնախմբերն ու գրասենյակները քաջատեղյակ են այն խնդիրներին, որոնք արդիական են մեր ժողովրդի, Հայաստանի և Արցախի հանրապետությունների, սփյուռքի հայկական գաղթօջախների համար: Համոզված եմ, որ Հայ դատի հանձնախմբերն ու գրասենյակները, որպես ազգային կառույցներ, հաջողության կհասնեն իրենց ծրագրերում՝ ջանքերի մեկտեղմամբ, համազգային շահի միասնական գիտակցումով:

Կրկին ողջունում եմ բոլորիդ, մաղթում հաջողություն և ամենայն բարիք:

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ